ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE96-C11B-46B9-A6B4 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ԵԴ2/0060/02/26

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

20 հունվարի 2026թ.
ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով Ռիտա Գասպարյան Արմենի Ա/Ձ-ն ընդդեմ «Երևանի Ավտոբուս» ՓԲ ընկերության՝ գնահատող հանձնաժողովի 24.12.2025թ. թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշումը՝ «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/81» ծածկագրով գնման ընթացակարգի հայցվորի հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ, անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Ռիտա Գասպարյան Արմենի Ա/Ձ-ի ներկայացուցիչը 2026թ. հունվարի 5-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ «Երևանի Ավտոբուս» ՓԲ ընկերության՝ գնահատող հանձնաժողովի 24.12.2025թ. թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշումը՝ «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/81» ծածկագրով գնման ընթացակարգի հայցվորի հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ, անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դատարանի 2026թ. հունվարի 12-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Որոշումը ստանալուց հետո հայցադիմումը սահմանված ժամկետում կրկին ներկայացվել է դատարան:

Կրկին ներկայացված հայցադիմումը մակագրվել է դատավոր Գ. Վարդանյանին 2026թ. հունվարի 14-ին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2026թ. հունվարի 15-ին:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Հետևաբար՝ հայցադիմումը դատարանում պետք է ընդունված համարել 2026թ. հունվարի 5-ին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Ռիտա Գասպարյան Արմենի Ա/Ձ-ն ընդդեմ «Երևանի Ավտոբուս» ՓԲ ընկերության՝ գնահատող հանձնաժողովի 24.12.2025թ. թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշումը՝ «ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/81» ծածկագրով գնման ընթացակարգի հայցվորի հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ, անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

Հայցադիմումը համարել դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 2026թ. հունվարի 5-ին:

Թիվ ԵԴ2/0060/02/26 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2026թ. փետրվարի 13-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան Digitally signed by VARDANYAN GRIGORI 1507850611

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am